ԱՐԾԱՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ

Մայիսի 25ին Մոսկուայում կայացած Անդրէյ Սախարովի անուան Մարդու իրաւունքների պաշտպան յանձնախմբի անդրանիկ գիտաժողովը, արծարծելով Հայաստանի հարցը, ընդունել է մասնագէտների կողմից ներկայացուած մի շարք որոշում-առաջադրանքներ:

1. Մասնագէտները իրենց խոր մտահոգութիւնն են արտայայտում Հայաստանում եւ շրջակայքում եղող իրադրութեան առնչութեամբ, յատկապէս ուժի գործածութեան, հայ բնակչութեան տեղահանութեան, ոճիրների, պատանդների եւ քաղաքացիների դէմ զինեալ ուժերի գործածութեան մասին, առաջարկելով հարցը ներկայացնել ՄԱԿի քաղաքային եւ քաղաքական իրաւունքների միջազգային ուխտի մարդկային իրաւունքների վարչութեան, ինչպէս նաեւ ՄԱԿի տնտեսական եւ ընկերային յանձնաժողովի մարդկային իրաւունքների յանձնախմբին:

2. Մասնագէտները որոշում են նաեւ փորձ անել մասնագէտների մի պատուիրակութիւն ուղարկել բախումների վայրը եւ բռնագաղթուածների ճամբարները, իրադրութիւնը հաստատելու եւ համապատասխան միջազգային մարմիններին տեղեկագիր ներկայացնելու համար:

3. Անհրաժեշտ պայմանները ստեղծելու բնիկ հայերը վերադարձնելու Ադրբեջանի Խանլար, Լեռնային Ղարաբաղի Հադրութ եւ Բերդաձոր ենթաշրջանների իրենց նախկին բնակավայրերը: Այս պայմանները պէտք է ընդգրկեն բնակչութեան ապահովութեան եւ պաշտպանութեան երաշխիքներ, յատկապէս խորհրդային ներքին ուժերի կողմից, խորհրդարանական եւ հանրային հսկողութեամբ:

4. Մասնագէտները թելադրում են կանգուն յանձնաժողովի հաստատումը, որը մնայուն եւ ազդու հսկողութիւն ու հակակշիռ կ'ունենայ մինչեւ կացութեան բնականոնացումը:

— — — — —